ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՈՒԳՈՐՅԱՆ

«03» 04 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000031

Ձեռնարկողը՝ ***«Ջրմուղկոյուղի» ՓԲԸ***

Գործունեությունը՝ ***Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածքներում գտնվող 400-500մմ տրամագծի պողպատե խողովակաշարի ապամոնտաժման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000031

<<03>> 04 2020թ.

<<Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածքներում գտնվող 400-500մմ տրամագծի պողպատե խողովակաշարի ապամոնտաժում>> նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝ <<Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Լճաշեն և Ծովագյուղ համայնքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական շրջաններում՝ <<Սևան ազգային պարկ>>-ի տարածքում: Գործունեության իրականացման համար հիմք է ընդունվել ՀՀ վարչապետի 2019թ. ապրիլի 15-ի թիվ 02/12.4/17623 հանձնարարականը, ինչպես նաև <<Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ին ուղղված <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի գրությունը՝ սեղմ ժամկետներում ապամոնտաժել և տեղափոխել <<Սևան>> ԱՊ-ի 1905մ բացարձակ նիշից ցածր տարածքներում գտնվող շենք-շինությունները և ենթակառուցվածքները/ջրագծեր և այլն/:

Նկարագրական մաս.

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվող գործունեության դիտարկվող տարածքներն ընդգրկելու են Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի՝ փոքր Սևանի հարավ-արևմտյան (18կմ) և Ծովագյուղ համայնքի՝ փոքր Սևանի հյուսիս-արևմտյան(10.5կմ) մասերը: Նախատեսվող գործունեության տարածաշրջանի հողերին բնորոշ են մարգագետնասևահողային, կարբոնատային ենթատիպը: Նախատեսվող գործունեության տարածքում սողանքային երևույթներ չկան: Կլիման չոր է, սառնամանիքային ձմեռներով և տաք ամառներով:

Համաձայն հայտի՝ գործունեության բուն տարածքում Կարմիր գրքում բույսեր և կենդանատեսակներ չկան, քանի որ այն երկար տարիներ գտնվում է մարդածին ազդեցության ներքո: Ապամոնտաժման աշխատանքների կատարման ժամանակ կենդանիների միգրացիոն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

ուղիները չեն փակվելու: Գործունեության տարածքից բնության հուշարձանները գտնվում են 1 կմ հեռավորության վրա:

Ապամոնտաժման ենթակա պողպատե խողովակները ստորգետնյա են՝ 400-500մմ տրամագծով, 10,5 կմ և 18 կմ երկարություններով: Ապամոնտաժվելու են պողպատե խողովակներն, ինչպես նաև խողովակների կցամասերը: 10,5կմ երկարությամբ խողովակաշարն անցնում է Ծովագյուղ համայնքի վարչական տարածքի Մ- 4՝ Երևան-Սևան-Իջևան և Մ-14՝ Շորժա-Վարդենիս ավտոճանապարհների աջ կողմից հարող ուղեգծով, իսկ 1,8 կմ երկարությամբ հատվածն անցնում է Լճաշեն համայնքի վարչական տարածքի՝ Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ ճանապարհի աջակողման հատվածով: Այս հատվածը՝ 2.6կմ, գտնվում է <<Սևան>> ԱՊ-ի 1-ին տնտեսական գոտում, իսկ 7.9կմ-ը՝ ազգային պարկի ռեկրացիոն գոտու տարածքում: 1.8 կմ երկարությամբ Լճաշեն համայնքի վարչական տարածքով անցնող խողովակաշարն անցնում է Մ-10 <<Սևան-Մարտունի-Գետափ>> ճանապարհի աջակողմյան հատվածով, որն ամբողջությամբ գտնվում է <<Սևան>> ԱՊ-ի 4-րդ տնտեսական գոտում:

Լճաշեն համայնքում գործունեության ենթակա տարածքի ամենամոտ հեռավորությունը Սևանա լճից կազմում է 40մ, իսկ Ծովագյուղ համայնքում՝ 80մ: Համաձայն հայտի աշխատանքները նախատեսվում է իրականացնել 12 ամսվա ընթացքում, կատարելով խրամուղիների մշակում՝ հողային աշխատանքներ, խողովակաշարերի կտրում, ապամոնտաժում, դուրս բերում և տեղափոխում: Մինչև խողովակաշարերի ապամոնտաժումը կատարվելու է խողովակաշարերի ազատում ջրամեկուսացումից և կոռոզիայի պաշտպանությունից: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են շինարարական տեխնիկա-տրանսպորտային միջոցներ՝ խողովակամբարձիչ, խողովակատար, բեռնատար մեքենաներ, բուլդոզեր, էքսկավատորներ և այլ, որոնք աշխատանքի իրականացման ընթացքում կայանվելու են ճանապարհի հարակից տարածքում:

Նախատեսվող գործունեության՝ խողովակաշարերի ապամոնտաժման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ, որի ընթացքում փորվելու և հանվելու է հողային զանգված և բուսահող: Լճաշեն համայնքի հատվածում հանվելու է 6208,3մ^3 ծավալով հող, որից 204,41 մ^3-ը բուսահող է: Ծովագյուղ համայնքի հատվածում հանվող հողային զանգվածը կազմելու է 36215,6մ^3, որից 1191,67 մ^3-ը հողաբուսաշերտ է: Փորված գրունտը և բուսահողը կողալցվելու և պահպանվելու են խողովակաշարերի հարևանությամբ, առանձին տարածքներում՝ ծածկված վիճակում: Փորված գրունտը պահվելու է առավելագույնը 1-2 օր, որից հետո ամբողջովին օգտագործվելու է որպես հետլիցք: Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի հարթեցում:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու է բնառեսուրս՝ ջուր, ապամոնտաժման ենթակա հարթակների ջրցանի (4մ^3/օր) և աշխատողների խմելու, կոմունալ կենցաղային կարիքների համար(0,11մ^3/օր), ընդհանուր ջրօգտագործումը՝ 4,11մ^3/օր: Ջրցանն իրականացվելու է ջրցան մեքենաներով, որը բերվելու է <<Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի մասնաճյուղից: Աշխատողների սննդի և սանիտարահիգենիկ կարիքները հոգալու նպատակով Կապալառուի կողմից վարձվելու է սեփական տուն, իսկ արտադրական հրապարակում տեղադրվելու է բիոզուգարան: Գործունեության իրականացման արդյունքում առաջանալու է թափոն՝ 100կգ մետաղի ջարդոն, որը տեղափոխվելու է <<Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի Սևանի պահեստ՝ հետագայում մասնագիտացված կազմակերպություններին վաճառելու նպատակով:

Առաջացող շինարարական աղբը հավաքվելու է առանձին և տեղափոխվելու է <<Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի Սևանի պահեստ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ

օգտագործման, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված հետևյալ բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում.

- գործունեության իրականացման ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցան,
- հանված գրունտի ծածկում՝ անջրթափանց թաղանթով,
- անբարենպաստ օդերևութաբանական եղանակներին՝ շիարարական աշխատանքների դադարեցում,
-բուսահողի պահում բրեզենտե ծածկույթով, բացառելով դրանց աղտոտումը,
- անհրաժեշտության դեպքում բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության գործողությունների մշակում, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ.հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով,
- արգելված թունաքիմիկատների օգտագործման բացառում,
- տրանսպորտային միջոցների և շինտեխնիկայի աշխատանքի դադարեցում գիշերային ժամերին,
-աշխատանքների ավարտից հետո տարածքի բարեկարգում, օգտագործելով հանված բուսահողը,
-շինարարական տեխնիկայի սպասարկում մասնագիտացված կետերում, հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով,
- աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունը իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են ժամանակավոր: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում բացառվելու կամ մեղմվելու են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով <<Սևան>>ազգային պարկ>>-ի վարչական շենքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ պայմանով, որ գործունեությունն իրականացնել <<Սևան>>ԱՊ-ի հետ պայմանագրով ամրագրված հողասեփականատերերի (վարձակալների) հետ գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
2. Գործունեությասն իրականացման ընթացքում բացառել Սևանա լճի աղտոտումը՝ վտանգավոր նյութերի, կեղտաջրերի ներթափանցումը, ջրային ռեսուրսի որակական հատկությունների փոփոխումը:
3. Խողովակների ապամոնտաժման աշխատանքների ավարտից հետո՝ ապահովել տարածքի բարեկարգումը և նախկին տեսքի վերականգնումը:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

4. Գործունեությունն իրականացնել <<Սևան>>ԱՊ-ի հետ պայմանագրով ամրագրված հողասեփականատերերի (վարձակալների) հետ գրավոր համաձայնության առկայության դեպքում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

<<Ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղարքունիքի մարզի <<Լճաշեն և Ծովագյուղ համայնքների վարչական տարածքներում գտնվող 400-500մմ տրամագծի պողպատե խողովակաշարի ապամոնտաժում>> նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ Թ. Նուրիջանյան